Զեկույց

շիրակի մարզի բիզնես ոլորտի հետազոտության

Գյումրի 2019

«Կառուցողական երկխոսության հանձնառություն»

ծրագիր.

«Պետական տարածաշրջանային բիզնես ռազմավարության

բարելավում՝ գործընկերային համատեղ ուժերով»

ենթադրամաշնորհային ծրագիր

Բովանդակություն

Համառոտագիր…….3.

Նպատակը և մեթոդաբանությունը ……5.

Մոնիթորինգի արդյունքները……6.

ֆինանսավորման պայմանները……..……6.

Հարկային օրենսդրության պարզություն, հասանելիություն……11.

Շուկայում մենաշնորհի ընկերություններից պետության կողմից

պաշտպանության ոչ բավարար մակարդակ……12.

ՓՄՁ ԶԱԿ կողմից ստացված աջակցություն……12.

Ինովացիոն ներուժ……..……13.

Տնտեսվարող սուբյեկտների արդյունավետ գործունեությանը

խոչընդոտող հիմնական գործոններ……..…14.

Առաջարկություններ ՀՀ կառավարությանը……17.

Համառոտագիր

Զեկույցում ամփոփված են «Արդյունավետ կառավարում և համայնքային զարգացում» և «Համայնքային նախաձեռնությունների և քարոզչության կենտրոն» հասարակական կազմակերպությունների կողմից իրականացված «Պետական տարածաշրջանային բիզնես ռազմավարության բարելավում՝ գործընկերային համատեղ ուժերով» ծրագրի շրջանակներում իրականացված մոնիտորինգի արդյունքները: Ծրագիրն իրականացվում է «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի (ղեկավար կազմակերպություն), Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, Հայաստանի համայնքների միության, «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի, «Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի, ինչպես նաև «Ազորա Սենթրալ Յուրըփ» չեխական ՀԿ-ի համատեղ կոնսորցիումով:

Մոնիտորինգի նպատակն է ուսումնասիրել Շիրակի մարզի փոքր ու միջին ձեռնարկատիրության ոլորտը, վերհանել բիզնես գործունեության խոչընդոտերն ու խնդիրները:

Ուսումնասիրությունն իրականացվել է քանակական և որակական մեթոդաբանությունների համադրմամբ. քանակական մասում տվյալները հավաքագրվել են հարցազրուցավարների մողմից հարցաթերթիկների լրացմամբ և վերլուծվել՝ քանակական հետազոտական ավանդույթի շրջանակներում: Որակական մասում իրականացվել են խմբային քննարկումներ՝ գործող և սկսնակ բիզնեսմենների առանձին խմբերով:

Արդյունքների վերլուծության հիման վրա մշակվել են կիրառական առաջարկություններ՝ ուղղված ՀՀ կառավարությանը:

Նպատակը և մեթոդաբանությունը

Սույն հետազոտության նպատակն է վերհանել բիզնես գործունեության խոչընդոտերն ու խնդիրները, բացահայտել կառավարության փոփոխությունից հետո ի հայտ եկած խնդիրները, պետական աջակցության արդյունավետությունը և պետական ռազմավարությունից նրա ակընկալիքները:

Հետազոտության համար ընտրվել և կիրառվել է հետևյալ մեթոդաբանությունը.

.Տեղեկության հավաքագրում՝ այցելությունների և հարցազրույցների միջոցով:

. Տեղեկության հավաքագրում կազմակերպության գրասենյակում:

.Ստացված տեղեկությունների որակական գնահատում և վերլուծություն:

Հարցազրույցներին մասնակցել են 500 ընկերություն: Քվոտաներ չեն սահմանվել ընկերությունների չափի հետ կապված. հիմնականում «միկրո» չափի ընկերություններ են, որոնց աշխատակիցների թիվը չի գերազանցել 10 մարդը: Չի իրականացվել նաև հատուկ սեգմենտավորում ըստ ոլորտների, ընկերությունների մեծամասնությունը հանդիսանում էին Շիրակի մարզի փոքր և միջին արտադրողներ, առևտրային ընկերություններ, արտահանողներ և ներմուծողներ: Պատասխանողները հիմնականում հանդիսանում են ընտրված ՓՄՁ-ների ղեկավարներ կամ հիմնադիրներ, որոնցից 292-ը կանայք են:

Մոնիտորինգի արդյունքները

Ընդհանուր առմամբ հարցմանը մասնակցել են Շիրակի մարզի թվով 500 ՓՄՁ սուբյեկներ:

Այն հարցին՝ թե.

Կառավարության փոփոխությամբ պայմանավորված ինչ փոփոխություններ եք զգացել Ձեր բիզնեսի հետ կապված, մասնակիցների 14%-ը պատասխանել է, որ, վերացվել է կաշառակերությունը, հարկային մարմինները անօրինական գործարքներ չեն անում, իսկ 76%-ը պատասխանել է, որ բիզնեսի զարգացման հարցում դրական փոփոխություններ չեն զգացել:



Ինչքանով են բավարարված բիզնեսի ֆինանսավորման պայմանները

Ֆինանսական միջոցների հասանելիությունը կարևոր խնդիր է Շիրակի մարզի ՓՄՁ-ների զարգացման համար: Ֆինանսական միջոցների հասանելիության խնդիրը ներառում է բարձր տոկոսադրույքներ: Վարկերի և փոխառությունների բարձր արժեքը և գրավի նկատմամբ խիստ պահանջները գնահատված են որպես առավել լուրջ խոչընդոտներ, ընկերությունները դրանք դիտարկում են որպես

կարևոր խնդիր իրենց բիզնեսի ընդլայնման համար: Բարձր են վարկերի տոկոսադրույքները (մոտ 15-25% փաստացի տոկոսադրույք), ոլորտային վարկավորման հնարավորությունները սահմանափակ են, գրավի պահանջները խնդիր են առաջացնում ձեռնարկատերերի համար, բիզնեսների զարգացման համար իրենց անհրաժեշտ է առևտրի ֆինանսավորում և գրավի նկատմամբ ավելի ճկուն պահանջներ: Բանկերը հանդիսանում են ՓՄՁ սեկտորի ֆինանսավորման հիմնական աղբյուրը, իսկ ֆինանսավորումը հիմնականում իրականացվում է վարկերի միջոցով: ՓՄՁ սեկտորին վարկային միջոցներն առաջարկվում են տեղական և օտարերկրյա արժույթով: Սակայն օտարերկրյա արժույթով վարկային միջոցները հիմնականում առաջարկվում են կարճաժամկետ և երկարաժամկետ տարբերակներով, իսկ տեղական արժույթով վարկերն առավելապես սահմանափակ են: ՓՄՁ-ներից շատերը խուսափում են դիմել վարկ ստանալու համար բարձր տոկոսադրույքի և բյուրոկրատական ձգձգված ընթացակարգերի պատճառով: ՓՄՁ-ներն ունենում են դժվարություններ կապված գրավադրման պահանջների կատարման հետ, քանի որ որպես գրավադրման հիմնական առարկա պահանջվում է անշարժ գույք, իսկ ՓՄՁ-ները որպես սեփականություն հիմնականում ունենում են շարժական գույք: Վարկի երաշխավորության սխեմաներ շուկայում առկա են, սակայն տարածված չեն:

Գծապատկերները ցույց են տալիս Շիրակի մարզում ՓՄՁ-ների համար առավել կարևոր խնդիրները ֆինանսական ոլորտում:

ա/Ինչքանով են բավարարված շուկայում առկա բիզնեսի ֆինանսավորման (վարկավորման) պայմաններն ըստ վարկի տոկոսադրույքի.



բ/ Ինչքանով են բավարարված շուկայում առկա բիզնեսի ֆինանսավորման (վարկավորման) պայմաններն ըստ վարկի ժամկետի.



գ/ Ինչքանով են բավարարված շուկայում առկա բիզնեսի ֆինանսավորման (վարկավորման) պայմաններն ըստ գրավի վերաբերյալ պահանջի.



դ/ Ինչքանով են բավարարված շուկայում առկա բիզնեսի ֆինանսավորման (վարկավորման) պայմաններն ըստ երաշխավորի վերաբերյալ պահանջի.



Մեր հանրապետությունում բավականին բարդ է հարկային դաշտը, որի պատճառով ՓՄՁ-ների համար պարտադիր է դառնում իրավաբանների կամ հաշվապահների մասնագիտացված խորհրդատվությանը դիմելը, այնուամենայնիվ մեր մարզում գործող հատկապես միկրոբիզնեսի համար հարկային օրենսդրությունը միայն 10 տոկոսի համար է անհասանելի, մնացած 90 տոկոսի համար այն նորմալ է, հարկային տոկոսադրույքներն էլ շատ բարձր չեն, բայց մաքսային տուրքերը 66 տոկոսի կարծիքով բարձր են, ներմուծման թույլատրելի ծավալները՝ սահմանափակ, և այն պայմանավորված է առավելապես ԵՏՄ ընդհանուր քաղաքականությամբ:

Հարկերից խուսափելը մենաշնորհ ընկերությունների, խոշոր բիզնեսների կողմից գնահատվել է որպես լուրջ խնդիր մասնակիցների մեծամասնության կողմից: Նրանց միայն 5%-ն է նշել, որ այս հարցում պետության կողմից ունեն պաշտպանվածության բավարար մակարդակ, 95 տոկոսը գտնում է, որ մենաշնորհ ունեցող ընկերությունների կողմից պետական պաշտպանվածություն չկա:

Գծապատկերները ցույց են տալիս Շիրակի մարզում ՓՄՁ-ների համար առավել կարևոր խնդիրները հարկային, մաքսային ոլորտում:

Հարկային օրենսդրության պարզություն, հասանելիություն



Հարկերի դրույքաչափեր



Մաքսային տուրքեր և վճարներ



Շուկայում մենաշնորհ ընկերություններից պետության կողմից պաշտպանության ոչ բավարար մակարդակ



Արդյո՞ք 2016-2018թթ. ընթացքում ՓՄՁ ԶԱԿ կողմից ստացել եք աջակցություն

ՀՀ ՓՄՁ քաղաքականության մշակումն իրականացվում է ՀՀ Տնտեսական ներդրումների և զարգացման նախարարության կողմից՝ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքին և և ՓՄՁ զարգացման քաղաքականության ու ռազմավարության հիմնադրույթներին համապատասխան, որոնք հաստատվել են դեռևս 2000 թվականին: ՓՄՁ ոլորտում քաղաքականության ներքո զարգացման ծրագրերն իրականացվում են ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից, որը հիմնադրվել է 2002 թվականին կառավարության որոշմամբ և ՓՄՁ զարգացման տարեկան ծրագրերն իրականացնող անկախ կառույց է: ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից հրապարակվում է տարեկան հաշվետվություն, որը վերլուծում է ՓՄՁ հատվածի զարգացման հիմնական միտումները:

ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացվող ծրագրերն օժանդակում են ՓՄՁ սուբյեկտներին և սկսնակ ձեռնարկություններին՝ վարկային երաշխավորությունների և տոկոսադրույքի վերին սահմանի միջոցով: ՓՄՁ ԶԱԿ-ը մարզերում ներկայացված է մեկ աշխատողով և մարզի մեկ քաղաքում, ՓՄՁ ԶԱԿ գործունեության վերաբերյալ տեղեկատվություն տարածվում է այդ մեկ աշխատողի ֆեյսբուքյան գրառումով, ուստի սկսնակ գործարարները հիմնականում իրազեկված չեն նման ծառայության հասանելիության վերաբերյալ: Այսպես մեր կողմից հարցված 500 սուբյեկտներից 351-ն են պատասխանել հարցին, որոնցից միայն 5-ն է ստացել ՓՄՁ ԶԱԿ աջակցություն:



Ինովացիոն ներուժը. ունեցել եք արդյոք նոր գաղափարներ բիզնեսի հետ կապված (նոր ծառայություն, նոր արտադրանք …)



Այսպիսով.

Փոքր և միջին տնտեսվարող սուբյեկտների արդյունավետ գործունեությանը խոչընդոտող հիմնական գործոնները հետևյալն են՝

1.Ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը

Բանկային ոլորտը չի իրականացնում բիզնեսին աջակցելու առաջնային գործառույթ: Վարկային գործիքները բազմազան չեն: Բարձր են վարկային տոկոսադրույքները: Իսկ վարկի տրամադրման համար գրավադրման պահանջը ստեղծում է վարկավորման համար լրացուցիչ խոչընդոտներ:

Հարկային ոլորտը

Հարկային համակարգը ներկայումս աշխատում է պատժիչ մեթոդներով: Հարկային օրենսդրությունը բավականին խրթին է ՓՄՁ-ների համար՝ առկա են տարբեր հարկատեսակներ և հարկման ձևեր, որոնցում կողմնորոշվելը դժվար է: Եկամտային հարկի դրույքաչափը բարձր է: Հարկային/մաքսային գործընթացները բարդ են:

Շուկայում մենաշնորհի ընկերություններից պետության կողմից պաշտպանության ոչ բավարար մակարդակը

Գերիշխող ընկերություններից պաշտպանության ոչ բավարար մակարդակը խոչընդոտում է ՓՄՁ ոլորտի զարգացումը:

2.Նոր գաղափարների իրականացման դժվարությունները պետության կողմից ոչ բավարար ուշադրության պատճառով:

Նոր գաղափարների իրականացման մասով ձեռնարակատիրական գործունեությանն ու նորարարություններին ուղղված որոշակի գործունեություն իրականացնում է <<Ձեռնարկությունների ինկուբատոր>> հիմնադրամը: Այն պարբերաբար համաֆինանսավորման դրամաշնորհային աջակցություն է ցուցաբերում ճարտարագիտության, մաքուր տեխնոլոգիաների, կենսատեխնոլոգիաների ոլորտում: Սակայն որոշակի անվստահություն կա մրցույթների մասնակցության հարցում: Մրցույթների պահանջներն ու ընթացակարգերը բարդ են, համաֆինանսավորման պահանջն իր հերթին որոշակի խոչընդոտներ է հարուցում: Բացի դրանից հիմնադրամը ֆինանսավորում է առավելապես (կամ բացառապես) SS ոլորտը, կամ SS առնչություն ունեցեղ նախագծերը:

3.Սոցիալական ձեռնարկատիրությանը պետության կողմից անուշադրության մատնումը:

Սոցիալական ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում նոր-նոր է ձևավորվում: Այն, որպես այդպիսին, իրավակազմակերպական ձև չի համարվում. սոցիալական ձեռնարկությունները կարող են լինել շահույթի նպատակ հետապնդող կամ չհետապնդող և հանդես գալ որպես կոոպերատիվ, ՔՀԿ, հիմնադրամ, սոցիալական ձեռնարկություն կամ բարեգործական կազմակերպություն: 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է, որ «կազմակերպությունն

իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից»: Համաձայն այս օրենքի կազմակերպությունը վարում է ձեռնարկատիրական գործունեության առանձնացված հաշվառում՝ դրա վերաբերյալ տեղեկությունները ներառելով օրենքով նախատեսված հաշվետվություններում, կազմակերպության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված շահույթը օգտագործվում է միայն կազմակերպության կանոնադրական նպատակների ուղղությամբ:

Այսպիսով. սոցիալական ձեռնարկությունները գործում են նույն օրենսդրական դաշտում ինչ ՓՄՁ-ները, և համաձայն փորձագետների գնահատականների, ունեն այն նույն հիմնախնդիրները, որոտային առաջնահերթությունները և կարիքները ինչ ՓՄՁ-ները: Սակայն ի տարբերություն ՓՄՁ-ների, ՍՁ-ների հիմնախնդիրներն առավել սուր են, քանի որ ՍՁ-ների կողմից ստացված շահույթներն ուղղվում են սոցիալական հիմնախնդիրների լուծմանը և նույն բիզնես միջավայրում այլ ընկերությունների հետ մրցակցելը ՍՁ-ների դեպքում դառնում է ավելի դժվար: Միաժամանակ սոցիալական ձեռնարկատիրությամբ զբաղվող կառույցների, մասնավորապես հասարակական կազմակերպությունների համար ֆինանսական հասանելիությունն ավելի վատ է, քան մասնավոր ձեռնարկատերերի համար, քանի որ, եթե վերջիններիս, ՓՄՁ ԶԱԿ… և այլ կառույցների կողմից, ինչ որ չափով

տրվում են պետական աջակցություններ, ապա հասարակական կազմակերպություններին, հիմնադրամներին սոցիալական ձեռնարկատիրությամբ զբաղվելու համար չկան նմանատիպ աջակցություններ:

Առաջարկություններ ՀՀ կառավարությանը

1. Հարկային օրենսդրության և վարչարարության վերանայում և պարզեցում, հարկատեսակների (թեկուզ՝ ոչ հարկաչափի) նվազեցում, պարզեցում: Ներդնել գոտիական հարկման համակարգ, համապատասխանաբար հողի հարկի, ավելացված արժեքի հարկի արտոնություններով: Եկամտային հարկման պարագայում չկիրառել համահարթեցում:
2. ՓՄՁ ֆինանսավորման հասանելիության դյուրացում՝ վարկավորումների տոկոսադրույքների և սահմանափակումների վերանայման, ինչպես նաև ՓՄՁ սեկտորի իրազեկվածության բարձրացման միջոցով: Կարելի է կիրառել մեկ պատուհանի սկզբունքը, որտեղից ձեռնարկությունները կկարողանան տեղեկատվություն ստանալ պահանջվող փաստաթղթերի, գործընթացի և այլ մասնրամասների վերաբերյալ: ՓՄՁ-ների կողմից նորարարական տեխնոլոգիաների, արդյունքի ստեղծման ու ներդրման համար ստեղծել ֆինանսական մատչելի գործիքներ, տրամադրել երկարաժամկետ վարկեր առանձին նպատակային ծրագրերի միջոցով: Մեծացնել աջակցությունը սկսնակ ձեռներեցներին:

3. Խթանել Սոցիալական ձեռնարկատիրության ոլորտի զարգացումը՝ Սոցիալական ձեռնարկատիրությամբ զբաղվող կառույցներին, մասնավորապես հասարակական կազմակերպություններին, վարկային ավելի ցածր տոկոսադրույքների, որոշակի դեպքերում նաև անտոկոս ֆինանսավորման, տեխնիկական և խորհրդատվական աջակցության տրամադրմամբ:

4. Նորարարական գաղափարների մասով պետական աջակցություն ցուցաբերել ոչ միայն <<Ձեռնարկությունների ինկուբատոր>> հիմնադրամի, և ոչ միայն SS առնչվող նախագծերին, այլ անմիջականորեն համապատասխան նախարարությունների միջոցով ֆինանսական և այլ աջակցություն ցուցաբերել տեխնիկական գյուտարարական առաջարկություններին հետևյալ կերպ.

Պարբերաբար հայտարարել դրամաշնորհային ծրագրերի մրցույթներ տեխնիկական գյուտերի համար, որոնց պահանջ-պայմաններով իրականացնել գյուտերի առևտրայնացում, գյուտերի ֆինանսավորում, գյուտերի համաֆինանսավորում, ընդհուպ մինչև պետության կողմից գյուտերի հեղինակային իրավունքի գնահատում և գնում (երբ գյուտի հավակնությունը դուրս է բիզնես շրջանակներից և ունի ուղղակի գիտական նշանակություն, կամ՝ երբ գյուտարարն ինքը չի ցանկանում զբաղվել բիզնեսով և ցանկանում է վաճառել իր գյուտի հեղինակային իրավունքը): Պետության կողմից տեխնիկական գյուտերի գնահատում և գնումը կարևոր է այն տեսանկյունից, որ գյուտարարները հիմնականում հեռու են բիզնեսից, նրանց համար հաճախ շատ դժվար է գնորդ գտնելն ու ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը. գյուտարարն՝ ինքը ստեղծագործող է, և, միայն այդքանը: Սա կարելի է իրականացնել

ՀՀ <<Մտավոր սեփականության գործակալության>> համապատասխան ստորաբաժանում ստեղծելով կամ համապատասխան պատասխանատուներ նշանակելով:

Սույն զեկույցը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ <<Իրավաբանների հայկական ասոցիացիա>> Կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող <<Կառուցողական երկխոսության հանձնառություն>> ծրագրով տրամադրված, <<Արդյունավետ կառավարում և համայնքային զարգացում>> և <<Համայնքային նախաձեռնությունների և քարոզչության կենտրոն>> հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող <<Պետական տարածաշրջանային բիզնես ռազմավարության բարելավում՝ գործընկերային համատեղ ուժերով>> ենթադրամաշնորհի շրջանակներում:

Զեկույցի բովանդակության համար պատասխանատվություն են կրում<<Արդյունավետ կառավարում և համայնքային զարգացում>> և <<Համայնքային նախաձեռնությունների և քարոզչության կենտրոն>> հասարակական կազմակերպությունները, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Աշխատանքային խումբ.

Ծրագրի ղեկավար	Մարիամ Աթոռակալյան
Ծրագրի համակարգող	Մուշեղ Ղրջյան
Մոնիթորինգային խմբի ղեկավար	Սվետլանա Մկրտչյան